**«Միջազգային Էներգետիկ Կորպորացիա» ՓԲԸ**
**0014 Հայաստան, Երևան, Ադոնցի 10Բ,**
**Հեռ. 24 50 99; ֆաքս՝ 24 51 99**

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ**

**Հայտարարության սույն տեքստը հաստատված է "ՄԷԿ" ՓԲԸ ԿԳՄ 2015 թվականի ապրիլի 27-ի նիստի**
**որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն**

Պատվիրատուն՝ «Միջազգային Էներգետիկ Կորպորացիա» ՓԲԸ, որի հասցեն է ք. 0021 Հայաստան, Երևան, Ադոնցի 10Բ, հայտարարում է բաց ընթացակարգով գնում՝ ՄԷԿ" ՓԲԸ Արզնի ՀԷԿ-ի վթարային վիճակում հայտված արդյունաբերական կուտակային մարտկոցների մատակարարման համար։

Բաց ընթացակարգում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել պայմանագիր՝ "ՄԷԿ" ՓԲԸ Արզնի ՀԷԿ-ի արդյունաբերական կուտակային մարտկոցների (120 տարր) մատակարարման համար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պայմանների համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք։

Գնման ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված անձինք:

Մասնակիցները պետք է բավարարեն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով սահմանված որակավորման չափանիշների պահանջները։ Ընտրված մասնակցին որոշելու համար կկիրառվի հայտերի բացման և գնահատման մասին «Գնումների մասին» ՀՀ օրենքով և "ՄԷԿ" ՓԲԸ կարիքների համար ապրանքների, աշխատանքների, ծառայությունների կանոնակարգված գնումներ անցկացնելու կարգի մասին Կանոնադրությունով սահմանված կարգը։

Հաղթող մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, որի հետ կնքվում է պայմանագիր։

Սույն հրավերը (մրցութային փաստաթղթերը) թղթային տեսքով ստանալու համար, անհրաժեշտ է գրավոր դիմել պատվիրատուին վերջինիս հասցեով՝ մինչև 2015 թվականի մայիսի 26-ին, ժամը 16:00; վճարելով 25 000 ՀՀ դրամ գումար՝ "Միջազգային Էներգետիկ Կորպորացիա" ՓԲԸ դրամարկղ կամ հաշվեհամարին ՀՎՀՀ-00078569; "Ամերիաբանկ" ՓԲԸ Հ/Հ - 1570012654440100։

Բաց ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել *"Միջազգային Էներգետիկ Կորպորացիա" ՓԲԸ / Հայաստանի Հանրապետություն, 0021, ք.Երևան, փող. Ադոնցի 10 Բ, հեռախոս՝ 24 50 99, ֆաքս՝ 24 51 99, e-mail՝* office@mek.am;

Հայտերը բացվում են հայտերի Ընկերության ԿԳՄ նիստում՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետին հաջորդող օրը՝ *2015 թվականի մայիսի 27-ին, ժամը 10:00-ին:*

Մասնակիցների որակավորման տվյալների՝ բաց ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին՝ համապատասխանությունը գնահատելու համար Մասնակիցները պետք է Պատվիրատուին ներկայացնեն բաց ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր։

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ա.Բարսեղյանին, 010 24 50 99 հեռախոսահամարով:

Գլխավոր տնօրեն Ա.Գրիգորյան